ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 1023 - Լ

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել 2019 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. 2019 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 1
Երևան

1023k.voroshum

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 27 -ի N 1023 -Լ որոշման

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ծրագրի դասիչը	Միջոցառման դասիչը	Միջոցառման անվանումը	Պետական մարմնի գերատեսչական դասիչը և անվանումը	Հետազոտություններ	Հետազոտությունն իրականացնող կազմակերպության անվանումը	Միջոցառման վրա կատարվող ծախսը /հազ. դրամ/
1162	**11006**	**Գիտական - գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ**	**104010 - ՀՀ կրթության և գիտության նախարարություն**			**120000.0**
				ԵՊՀ հիմնադրամի «Տեղեկատվական անվտանգության գիտահետազոտական կենտրոն» ծրագրին պետական աջակցություն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	7000.0
				«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ» հիմնադրամի «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի (Հայսմավուրքներ, Ճառընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայում ու գիտատեխնիկական մշակում» ծրագրին պետական աջակցություն	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ» հիմնադրամ	18000.0

				ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ ՊՈԱԿ-ի «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	22000.0
				ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՊՈԱԿ-ի «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	8000.0
				ՀՀ ԳԱԱ ԿՔԻ ՊՈԱԿ-ի «Գալարմինի կիրառական նշանակությունը տարբեր ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	10000.0
				ՀՀ ԳԱԱ Էկոկենտրոն ՊՈԱԿ-ի «Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտանգության ապահովման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	13000.0

				ՀՀ ԳԱԱ ՄԿԻ ՊՈԱԿ-ի «Հայկական գենոֆոնդի ուսումնասիրությունը և քարտեզագրումը» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	10000.0
				ՀՀ ԷԵԲՊՆ «ՀԱՅԱՏՈՄ» ՓԲԸ-ի «Սարքավորումների մետաղի վիճակի հսկման ակուստիկ էմիսիոն մեթոդի մշակման նպատակով փորձարարական հետազոտությունների իրականացում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	8000.0
				ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ ՊՈԱԿ-ի «Կլիմայի փոփոխման և Սևանա լճի մակարդակի բարձրացման պայմաններում Հայաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող լճային էկոհամակարգի վիճակի և նրա կենսառեսուրսների կարիոլոգիական հետազոտում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	12000.0

				ՀՀ ՄՆ ՊՄԺԳՀԿ ՊՈԱԿ-ի «Հայոց արքաների դամբարանների հետազոտում. II փուլ, շարունակական պեղումներ» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ	12000.0
1119	**11001**	**«Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ**	**104013 - ՀՀ պաշտպանության նախարարություն**	**«Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ**	**ՀՀ պաշտպանության նախարարություն**	**2433461.4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ